ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 8, 1963 Общественные науки

Ս. Խ. Ալեքսանյան

ԷՋՄԻԱԾՆԻ ՎԱՆՔԻ ԵՎ ՎԱՆՔԱՊԱՏԿԱՆ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ*

Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացմանը նախորդող ժամանակաշրջանի հայ գյուղացու դրությունը պարզելու համար կարևոր նշանակություն ունի այն հարցի լուծումը, թե ինչպիսի փոխհարաբերություն գոյություն ուներ մեր երկրի ֆեոդալ-հողատերերի հիմնական դասի՝ մուլքադարների և նրանց հարկատու մուլքադարական գյուղացիների միջև՝ հողի տնօրինման խնդրում։ Կարո՞ղ էր արդյոք գյուղացին ցանկության դեպքում, ազատորեն, մուլքադարից անկախ վաճառել կամ նվիրաբերել իր հողային ունեցվածքը։ Մուլքադարը այդպիսի գործարքներին միջամտելու կամ դրանք կանխելու շարժառիթներ ունե՞ր, թե՞ բոլորովին անտարբեր էր դեպի մուլքատու հողերի ընդհանուր ֆոնդում կատարվող փոփոխությունները։

Այս հարցի քննարկումը ըստ էության պիտի հանգեցնի այն կարևոր խնդրի պարզաբանմանը, թե հարկ-ռենտան վճարելուց բացի գյուղացին ուրիշ որևէ բանում կախում ունե՞ր մուլքադարից։ Կարևոր է հատկապես այն հարցը, թե մուլքադարական գյուղացին ազատ տեղափոխման իրավունքից օգտվելու ինչպիսի հնարավորություն ուներ։ Արդյոք միայն նյութական սուղ կարիքը, տրնտեսական լիակատար քայքայման վտանգը և ամենուր տիրող շահագործման միևնույն պայմաններն ու աղքատությունն էին ստիպում նրան կառչած մնալ հողակտորից ու չտեղափոխվել, թե, այդ բոլորից բացի, առկա էր նաև մուլքապարի ուղղակի հարկադրանքը։

Արևելյան Հայաստանի ազրարային հարաբերություններով զբաղվող հետազոտողները միասնական տեսակետի չեն մուլքադարի ու գյուղացու փոխհարաբերության հարցում։

Մեծամասնության կարծիքով մոլորություն պետք է համարել 1829—1837 թթ. Հայկական մարզում պաշտոնավարած Ի. Շոպենի հաղորդումն այն մասին, որ պարսկական տիրապետության ժամանակաշրջանում, մեր երկրի մուլքադարները անմիջական ոչ մի ազդեցություն չունեին գյուղացիների վրա, այլ միայն հարկահավաքի միջոցով էին ստանում իրենց հասանելիք հարկաբաժինը բերքի ընդհանուր շտեմարանից[1]։

Շոպենին քննադատող հեղինակները միահամուռ պնդում են, որ գյուղացու կախումը մուլքադարից չէր սահմանափակվում հարկ-ռենտայի վճարումով, որ նա, չնայած իրավականորեն անձնապես ազատ էր համարվում, բայց այդ ազատությունը փաստորեն կեղծիքի էր վերածված։ Տվյալ դեպքում հե-

---

* *Հոդվածում քննության ենք առնում ոչ թե վանքի և վանքապատկան գյուղացիների փոխհարաբերությունն ընդհանրապես, այլ միայն նրանց փոխհարաբերությունը՝ հողի տնօրինման խնդրում։*

[1] И. Шопен, Исторический памятник состояния Армянской области в эпоху присоединения ее к Российской империи. СПб., 1852, стр. 927.

տաղտտողները գլխավորապես նկատի ունեն այն հանգամանքը, որ գյուղացին իրականում ազատ տեղափոխվելու հնարավորություններ չուներ և կաշկանդող բազմաթիվ թելերով կապված էր իր մուլքադարի հետ։ Այստեղ նրանք նշում են երկու կարգի հիմնական պատճառ, որոնք ստիպում էին գյուղացուն կառչել հողակտորից՝ մնալով միևնույն հողատիրոջ լծի տակ։

1. Ամենուրեք գյուղացուն սպասում էին շահագործման միևնույն, գուցե և ավելի վատթար, պայմաններ. տեղափոխմանը ուրվականի նման ուղեկցում էր տնտեսական լիակատար քայքայման վտանգը. գյուղատնտեսությունից դուրս աշխատանքի շուկայի բացակայության պայմաններում, տեղափոխումը ավելին վաստակելու և շատ թե քիչ բարեկեցիկ կյանքի ոչ մի հույս չէր ներշնչում գյուղացուն, և այլն։

2. Մուլքադարը տնտեսական զորությամբ և իշխողի իր դիրքով, դանազան միջոցներով, ըստ որում նաև բռնությամբ, սահմանափակում էր գյուղացու տարրական իրավունքները, զրկում նրան տեղափոխման հնարավորություններից։

Անշուշտ, երկու կարգի պատճառներն էլ վերջին հաշվով, թե տեսականորեն, թե գործնականում, կապված էին մեկը մյուսի հետ, լրացնում էին միմյանց։ Բայց գյուղացու և մուլքադարի անմիջական փոխհարաբերության համար նրանք հավասարապես հատկանշական ճանաչվել չեն կարող։

Որ գյուղացու ազատ տեղափոխումը իրավականորեն սահմանափակված չէր, բայց տնտեսական մի շարք հանգամանքներ զրկում էին նրան տեղափոխման հնարավորություններից,—այդ մասին հետազոտողների մեջ տարակարծություններ չկան։ Ի. Շոպենի տեսակետը ժխտելու համար այդ հանգամանքների վկայակոչումը տեղին էլ չէր լինի, քանի որ նրանք չեն հատկանշում գյուղացու և մուլքադարի անմիջական փոխհարաբերությունը։ Տվյալ դեպքում գյուղացու կախումը մուլքադարից (հարկ-ռենտայի վճարումից բացի) ցույց տալու համար հատկանշական կարող են լինել գյուղացուն կաշկանդող այն հանգամանքները, որոնք հետևանք էին մուլքադարի ուղղակի, ապօրինի հարկադրանքի։

Սակայն Ի. Շոպենին քննադատող ոչ բոլոր հետազոտողներն են պարզորոշ ցույց տալիս (կամ փորձում ցույց տալ), թե հարկ-ռենտան գանձելուց բացի, կոնկրետ ինչպե՞ս և ինչումն էր դրսևորվում մուլքադարի անմիջական ազդեցությունն ու հարկադրանքը գյուղացիների նկատմամբ։

Այս տեսակետից ուշադրության արժանի են Բ. Մ. Հարությունյանի դատողությունները՝ հողի տնօրինման մեջ մուլքադարի և գյուղացու փոխհարաբերության վերաբերյալ։ Նրա կարծիքով, մուլքադարական գյուղերում «հողային ունեցվածքի օտարումն ուրիշներին (на сторону) կարող էր տեղի ունենալ միայն մուլքադարի գիտությամբ, գուցե և՝ թույլտվությամբ»[2]։ Այդ նշանակում է, որ հողի տնօրինման գործարքներում գյուղացին ազատ չէր մուլքադարից։ Հավանաբար, Բ. Մ. Հարությունյանի այդ միտքը վերաբերում է հողային ունեցվածքի օտարման անհատական գործարքներին, որովհետև մինչ այդ, անդրադառնալով մուլքադարի և համայնքի փոխհարաբերությանը, նա գրում է. «Տվյալ մուլքադարական գյուղի սահմաններում հողային գույքի տրն-

[2] Б. М. Арутюнян, Крупное монастырское хозяйство в Армении в XVII—XVIII вв., Ереван, 1940 г., стр. 36.

օրինման իրավունքը պատկանում էր համայնքին ամբողջությամբ ու նրա անդամներին... Մուլքադարը իրավունք չուներ խառնվելու համայնքի ներքին գործերին»[3]։

Բ. Մ. Հարությունյանի այս եզրակացությունները, որոնց նա հանգել է գլխավորապես էջմիածնի վանքի և վանքապատկան գյուղերի փոխհարաբերությունը քննության առնելիս, ընդհանուր առմամբ առարկություն չեն վերցնում, բայց պարզաբանման ու մասնակի ճշգրտումների կարիք ունեն՝ հենց նույն այդ գյուղերին վերաբերող փաստական որոշ տվյալների լույսի տակ, որոնց մասին խոսք կլինի ստորև։

Մուլքադարի և գյուղացու փոխհարաբերության մասին պատմագիտական գրականության մեջ կա նաև մեկ այլ տեսակետ, ըստ որի Ի. Շոպենի վերևում հիշատակված միտքը համապատասխանում է իրականությանը, այսինքն՝ գյուղացու կախումը մուլքադարից դիտվում է լոկ հարկ-ռենտայի մի մասի վճարման սահմաններում։ Մասնավորապես հողային գույքի տնօրինման խնդրում գյուղացին ազատ է ճանաչվում՝ այն իմաստով, որ ցանկացած դեպքում նա կարող էր մուլքադարից անկախ վաճառել, նվիրաբերել ու գրավ դնել ոչ միայն իր այգին կամ տնամերձը, այլև նրա անհատական օգտագործմանը տրամադրված համայնքապատկան հողաբաժինը։ «Մեր երկրի մուլքադարական գյուղերի գյուղացիները,—գրում է Ս. Մարկոսյանը,—ազատ կերպով կարող էին ամեն ճանապարհով օտարել իրենց օգտագործման ներքո գտնվող հողերը, ինչպես և ձեռք բերել հողեր, հարկավ այն պարտավորության հետ միասին, որ ընկնում էր հողի վրա»։ Այս միտքը վերաբերում է հողերի ինչպես համայնական («գեղովի»), այնպես էլ անհատական օտարումներին։ Իր տեսակետն ավելի հիմնավոր դարձնելու նպատակով Ս. Մարկոսյանը շեշտում է նաև այն հանգամանքը, որ գյուղացին «ազատ կերպով կարող էր իր տրամադրության տակ եղած հողն օտարել նույնիսկ նույն գյուղի մուլքադարին»[4]։

Իրենց դրույթները հիմնավորելու համար, երկու տեսակետի կողմնակիցներն էլ ամենից հաճախ վկայակոչում են էջմիածնի վանքին ու նրա մուլքադարական գյուղերին վերաբերող փաստական տվյալներ։ Դա, իհարկե, պատահական չէ։ Էջմիածնի վանքը Հայաստանի ամենախոշոր տնտեսատեր-մուլքադարն էր և հենց նրա տնտեսության ու վանքապատկան գյուղերի մասին է, որ աղբյուրները անհամեմատ հարուստ փաստական նյութ են տալիս հետազոտողին։

Սակայն, մի կողմ թողնելով այն հարցը, թե կարելի է հիշյալ տվյալներից հանված եզրակացություններն առանց վերապահումների ընդհանրացնել ու հավասարապես տարածել Հայաստանի մուլքադարական բոլոր գյուղերի վրա, նախապես պետք է պարզել, թե որքանով են համապատասխանում այդ եզրակացությունները էջմիածնի մուլքադարական գյուղերում տիրող պատմական իրականությանը։ Այլ կերպ ասած, անհրաժեշտ է առանձին քննությամբ պարզել, թե ինչպիսի փոխհարաբերություն գոյություն ուներ էջմիածնի վանքի և վանքապատկան գյուղացիների միջև՝ հողային գույքի տնօրինման խնդրում։

---

3 Բ. Մ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 34։

4 Տես Ս. Մարկոսյանի «Արևելյան Հայաստանի հողատիրության հարցի շուրջը» հոդվածը (Պատմա-բանասիրական հանդես, 1961 թ., № 3—4, էջ 270) և «Ագրարային հարաբերությունները Արարատյան երկրում» աշխատության առաջին գլխի 2-րդ ենթագլուխը՝ «Հողի օտարումը» (Երևան, Հայպետհրատ, 1959 թ.)։

* * *

Առուծախի, գրավդրման կամ նվիրաբերման ամեն մի գործարք ինքնին մի որոշ փոխհարաբերություն է վաճառողի և գնողի, նվիրաբերողի և նվերը ստացողի միջև։ Այս իմաստով կարելի է ասել, որ աղբյուրներն առատ են էջմիածնի վանքի և վանքապատկան գյուղացիների փոխհարաբերությանը վերաբերող նյութերով։ Հատկապես «Ջամբռ»-ում կան բազմաթիվ հիշատակություններ՝ գյուղացիների կողմից վանքին այգիներ, հողակտորներ, խոտհարքներ վաճառելու և «վախմ» տալու մասին։ Ընդ որում, վաճառողի կամ նվիրատուի դերում հանդես են գալիս ոչ միայն համայնքները, այլև առանձին գյուղացիներ։

Ահա այդպիսի հիշատակություններից մի քանի՝ը.

1622 թ. վաղարշապատցի ոմն Հարությամ իր այգին ծախում է Նահապետ կաթողիկոսին[5]։

Խոսելով Օշականի Մեծ այգու մասին, Սիմյոն Երևանցին նշում է, որ այն «նախապես վախմ և յիշատակ տան Յոշականցիք սրբոյ Աթոռոյս»[6]։

1722 թ. օշականցիները իրենց մուլքադարին ծախում են Մոլլադուրսուն գյուղով անցնող համայնքապատկան ջրի 1/3 մասը[7]։

1729 թ. էջմիածնի վանքը վաղարշապատցի Սահակից գնում է մի անշեն հողակտոր ու դարձնում խաղողի այգի[8]։

Այսպիսի փաստերով «Ջամբռ»-ը ուղղակի ծանրաբեռնված է։ Հետևաբար վանքապատկան գյուղացիների կողմից իրենց մուլքադարին հողային ունեցվածք վաճառելն ու «վախմ» տալը սովորական և հաճախադեպ երևույթ էր։ Դա էջմիածնի վանքի սեփական հողատարածությունների ընդարձակման հիմնական միջոցներից մեկն էր հանդիսանում։ Եվ պատահական չէ, որ աղբյուրներում ամենից շատ հիշատակվում են վանքի գործարքները Վաղարշապատ գյուղի բնակիչների հետ, որոնց հողերին կից, և դրանց հաշվին, տարածվում ու ընդարձակվում էին Էրա սեփական տնտեսության հիմնական օբյեկտները։

«Ջամբռ»-ի վկայությունները խոսում են նաև այն մասին, որ գյուղական համայնքի առանձին անդամներ իրավասու էին անհատական գործարքների առարկա դարձնել իրենց հողային ունեցվածքը ընդհուպ մինչև վաճառելն ու նվիրաբերելը։ Բայց այստեղ հիմնական հարցն այն է, թե հողը տնօրինելու գյուղացու իրավասությունը գործողության ինչպիսի սահմաններ ուներ. կարո՞ղ էր գյուղացին մուլքադարից անկախ նույնանման գործարքների մեջ մտնել ցանկացած մարդու հետ։ «Ջամբռ»-ից քաղված վկայությունները (և նույն բնույթի բազմաթիվ ուրիշ վկայություններ) այս հարցին պատասխան չեն տալիս. նրանք վերաբերում են մուլքադար վանքի և նրան մուլքատու գյուղացիների գործարքներին, որոնց մեջ գյուղացին անկասկած ազատ պետք է լիներ այն պարզ պատճառով, որ գործ ուներ հենց իր մուլքադարի և ոչ թե մեկ ուրիշի հետ։ Այս իմաստով հիշյալ վկայությունները ավելի շուտ հատկանշա-

5 «Ջամբռ», համաժողովեցեալ և շարադրեցեալ ի Սիմէոնէ կաթողիկոսէ Երևանցւոյ։ Վաղարշապատ, 1873, էջ 166։

6 «Ջամբռ», էջ 172։

7 Նույն տեղում, էջ 194։

8 Նույն տեղում, էջ 167։

կան կարող են լինել գյուղացու և համայնքի, բայց ոչ գյուղացու և մուլքադարի, փոխհարաբերության համար։

Մինչդեռ լուրջ հիմքեր կան պնդելու, որ վանքապատկան գյուղացին չնայած օժտված էր իր հողային ունեցվածքը վաճառելու իրավասությամբ, բայց այդ իրավասությունը կարող էր կենսագործվել խիստ սահմանափակ շրջանակներում՝ այնքանով, որքանով մուլքադարը փոխադարձաբար կբարեհաճեր նրանից գնել։ Հողն օտարելու մյուս ճանապարհները փակ էին նրա առաջ։ Աղբյուրներում չկա թեկուզ և եզակի վկայություն, որը հիմք տար կարծելու, թե վանքապատկան գյուղերի բնակիչները կարող էին ազատորեն հողային գույք վաճառել, բացի իրենց մուլքադարից, նաև ուրիշ մարդկանց։ Մինչդեռ այդպիսի վկայությունները միայն հատկանշական կլինեին՝ հողի տնօրինման մեջ մուլքադարի նկատմամբ գյուղացու ազատ վիճակը ցույց տալու համար։ Սխալված չենք լինի, եթե ասենք, որ աղբյուրներում նման վկայությունները բացակայում են հենց այն պատճառով, որ մուլքադարից անկախ գյուղացիական հողերն անհատապես օտարելու նույնիսկ փորձերը հազվադեպ են եղել վանքապատկան գյուղերում։

Այդ հազվադեպ փորձերից մեկի մասին «Ջամբռ»-ում կարդում ենք հետևյալ հետաքրքիր հիշատակությունը. «Այս մասին ևս գրելի է ի յօրինակ ապագայից։ Ի մեր գեօղս (Վաղարշապատում—Ս.Ա.) Կակոս անունով մարդ մի այգին իւր ծախեալ էր գեօղիս տառուղայ և խանի նօքար Սարու-Մահմատ կոչեցեալ տաճկին՝ տաճկերէն հաստատուն ղաբալայիւ՝ ի մէնջ ծածուկ. յետոյ ի գիտելն մեր, ճնշելով զծախողն և զառնողն ևս, յետս առաք զայգին ի տաճկէն և գարձուցաք ի Կակոսն և զտաճիկն ի գեօղէս և ի տառուղայութենէ հանեալ վարեցաք. ի ՌՄԺԶ (1216) թուոջն մերում (1767 թ.)»[9]։

Ուրեմն, Էջմիածնի վանքը, որպես մուլքադար, թույլ չի տվել մուլքադարական գյուղացուն վաճառելու իր այգին նույնիսկ այն բանից հետո, երբ գործարքն արդեն ավարտված էր ու վավերացված անհրաժեշտ փաստաթղթով։ Ավ հետաքրքիրն այն է, որ Սիմյոն Երևանցին հիշատակելով այդ փաստը, չի մոռանում նախապես նշել, որ այն «ևս գրելի է ի յօրինակ ապագայից», ասել է թե՝ հետագայում ևս գյուղացիներից որևէ մեկը թող չփորձի օտարել իր հողային ունեցվածքը։

Ահա, այս միակ փաստի վրա հենվելով է, որ Բ. Մ. Հարությունյանը հանգում է, վերևում արդեն բերված, հետևյալ եզրակացությանը. «Հողային ունեցվածքի օտարումը ուրիշներին կարող էր տեղի ունենալ միայն մուլքադարի գիտությամբ, գուցե և՝ թույլտվությամբ»։

Եթե նկատի ունենանք այն իրողությունը, որ Էջմիածնի վանքը ընդհանրապես անտարբեր չէր դեպի մուլքադարական դյուղերի հողային ֆոնդում կատարվող փոփոխությունները, ապա Բ. Մ. Հարությունյանի այդ եզրակացությունը առարկություն չի վերցնում։ Բայց, հավանաբար, լրացուցիչ այլ փաստերի բացակայությունը ստիպել է հեղինակին կասկածի տակ առնել հողային առուծախի անհատական գործարքներում մուլքադարի թույլտվության անպայմանական ու պարտադիր լինելը։ Մինչդեռ այդպիսի գործարքներում գյուղացու համար կարևորը, վերջին հաշվով, մուլքադարի թույլտվությունն էր, որից հետո միայն գործարքը կարող էր հասնել նպատակակետին։ Սակայն այսպի-

---

9 «Ջամբռ», էջ 169 (ընդգծումը մերն է—Ս. Ա.)։

սի պնդումն էլ ըստ էության սկզբունքային նշանակություն չէր ունենա՝ հողի տնօրինման մեջ գյուղացու կայուն դրությունը լուսաբանելու տեսակետից։ Մի բան է ասել, որ ընդհանրապես բացառված չէր հողն օտարելու հնարավորությունը (թեկուզ և մուլքադարի թույլտվությունից հետո), մի այլ բան՝ պնդել, որ մուլքադարն, իբրև կանոն, չէր թույլատրում հողային ունեցվածքի օտարումներ։ Որոշ տվյալներ հիմք են տալիս, առանց վարանելու, խոսել այս վերջին պնդման օգտին։

Հենց այն հանգամանքը, որ «Ջամբռ»-ում հիշատակված վաղարշապատցի այգետերը սկզբից ևեթ թաքցրել էր իր գործարքը էջմիածնի վանքից, հիմք է տալիս կարծելու, որ վանքապատկան գյուղերում մուլքադարը առհասարակ կանխում էր հողն օտարելու ամեն մի փորձ։ Որ վաղարշապատցի Կակոսի հետ կատարվածը պատահականություն չէր, այլ գյուղացիների նկատմամբ էջմիածնի վանքի մշտական հարկադրանքի մասնակի դրսևորում, այդ երևում է Սիմյոն Երևանցու նախազգուշացնող և սպառնալիք արտահայտող բառերից՝ «յայս ևս գրելի է ի յօրինակ ապագայից»։

Գուցե հնարավոր լիներ թերահավատությամբ խոսել «Ջամբռ»-ի այդ միակ վկայության մասին, կամ Սիմյոն կաթողիկոսի հաղորդումը դիտել որպես պատմական իրականության կամայական մեկնաբանության հետևանք, եթե մեզ հասած չլիներ ուշագրավ մի փաստաթուղթ, որը ոչ միայն հաստատում է «Ջամբռ»-ի վկայությունը, այլև պարունակում է արժեքավոր մանրամասնություններ քննարկվող հարցի վերաբերյալ։ Հետաքրքիր է, որ նորահայտ այդ փաստաթուղթը, չնայած համեմատաբար ուշ շրջանի է, բայց արձանագրում է պատմական այն ընդհանուր երևույթը, որի մասնակի դրսևորումներից մեկը դեռևս Սիմյոն կաթողիկոսի ժամանակ կատարված և նրա կողմից «Ջամբռ»-ում հիշատակված դեպքն էր։ Փաստաթուղթը վերաբերում է ընդհանրապես էջմիածնին մուլքատու բոլոր հողերի տնօրինման հարցին։ Դրանով էլ բարձրանում է նրա, որպես պատմական սկզբնաղբյուրի, արժեքը։

1820 թ. Օշական գյուղի բնակիչներ Հարությունն, Գրիգոր և Նիկողայոս Սանդրոսյան եղբայրները դիմում են Եփրեմ կաթողիկոսին, խնդրելով թույլ տալ իրենց «հայրենական» ջրաղացի կողքին պատրաստել ևս մի ջրաղաց։ Բավարարելով խնդրատուների պահանջը, կաթողիկոսը բոլոր օշականցիներին ուղղում է կոնդակ, որը մեջ ենք բերում աննշան կրճատումներով։

«Յայտ առնեմք ամենեցուն՝ որոց հարկ իցէ դիտել, որ յՕշական գիւղն ամենայն անդաստանօք իւրովք և բոլոր պարագայիւքն է վախմ-մուլք սրբոյ Աթոռոյս, և չէ բնաւին հրաման, որ քայլ մի ոտին տեղ և հող գնով ծախել լինի՝ ոչ այլոց գիւղացւոց և ոչ նոյն գիւղացիքն ի վերա միմեանց· բայց՝ եթէ խրնդրողք լինիցին ի նոյն գիւղացւոցն՝ շինել ջրաղաց, այգի և այլ ինչ, հրաման տալ լիցի, ոչ եթէ իբրև հայրենական մուլք համարելով զայն ևս՝ ծախել կամ բաշխել ում և կամիցին, այլ միայն զեկամուտ արդիւնս շինուածոցն իւրեանց վայելողք լինիցին յաղգէ յազգ և յորդւոց յորդիս, և երբ չկարիցեն կառավարել և կամիցին ծախել, ի վերա նոյն գիւղացւոցն իւրեանց ծախեսցեն՝ միայն զշինութեան փայտից և այլ ծախուց գինսն կարող լինիցին առնուլ, և ոչ զվաղմ տեղին և հողոյն գինսն՝ ըստ որում է սրբոյ Աթոռոյս յատկացեալ. և այսպես ծախելն ևս պարտի լինիլ հրամանաւ սրբոյ Աթոռոյս Գահակալացն, և ոչ առանձին իւրեանց բանիւն և գիտութեամբ։ Բայց՝ ի վերա այլ գիւղացւոցն բնաւին չունիցին հրաման ծախելոյ կամ բաշխել միոյ։ Ուստի՝ յայսմ ներկայիս

յօշականցի Սանդրոսեանքն խնդրեցին ի մէջ շինել զջրաղաց մի, և մեք ևս հանդերձ սրբազան սինոթի եպիսկոպոսօքն հրաման տուաք այսու գրով տանուտէր պարոն Յարութիւն, Գրիգոր և Նիկողայոս երեք հարազատ եղբայրցն Սանդրոսեան, զի կից ընդ հայրենական շէն և աւատ ջրաղացին իւրեանց շինել ևս զմի ջրաղաց, որ ի մէջ միոյ ծածկեալ տանն լիցի մէկ զոյգ ջրաղաց, այսինքրն երկու օճաղք ջրաղացի... Բայց՝ ջուրն սոցա իւր բնական առուովն գայ և ելեալ անտի երթայ ի տէր Պօղոսի, տէր Աւետիսի և յԱրութիւնի ջրաղացսն՝ որք են ի մէջ միոյ տանն։ Արդ՝ յիշեալ Սանդրոսեան երեք հարազատ եղբայրքն տեսալ զբազմադիմի նեղութիւնս սրբոյ Աթոռոյս ետուն քսան թումանս իբրև օգնութիւն, լուսածին հոգևոր ծնողիս իւրեանց սրբոյ տաճարիս... յամի տեառն հազար ութն հարիւր քսան, յամսեանն ապրիլի 28...»[10]։ Նշված են նաև ջրաղացատեղի սահմանները։

Բացի կաթողիկոսից, կոնդակը ստորագրել և իրենց առանձին կնիքներով կնքել են Էջմիածնի սինոդի հինգ անդամ։

Այս փաստաթղթից երևում է, որ վանքապատկան գյուղերում հողի օտարման հնարավորություններն ընդհանրապես բացառված էին։ Գյուղացին չէր կարող վաճառել ոչ միայն իրեն տրամադրված համայնքապատկան հողաբաժինը, այլև իր այգետեղն ու նույնիսկ տնատեղը։ Էջմիածնի վանքը չէր թույլատրում ոչ միայն հողային ունեցվածքի օտարում ուրիշներին (գյուղից դուրս), այլև հողի առուծախի ու նվիրաբերման գործարքներ՝ համագյուղացիների միջև։ Հանդամանքների բերումով, հողից հրաժարվելու դեպքում, գյուղացուն իրավունք էր վերապահվում վաճառել ոչ թե հողը, այլ միայն նրա վրայի «շինվածքը», այսինքն՝ նրանից եկամուտ ստանալու իրավունքը, նրա վրա եղած զանազան կառույցների շինանյութը, ջրաղացը, տունը, այգին և այլն։ Ուրիշ խոսքով, առուծախի գործարքի բովանդակություն կայանալու էր նրանում, որ դնողը վճարելու էր միայն տվյալ հողակտորի, որպես եկամտաբեր հողվածի, վրա նախորդ տիրոջ թափած ծախսերի դիմաց, ուստի և ձեռք էր բերելու ոչ թե սեփականատիրման, այլ սոսկ հողօգտագործման իրավունք։ Այդ իրավունքի վաճառքն ու նվիրաբերումն էլ թույլատրելի էին միայն գյուղի սահմաններում՝ համագյուղացիների միջև, այն էլ ոչ ինքնագլուխ, «իւրեանց բանիւն և գիտութեամբ», այլ միայն վանքի թույլտվությամբ։

Քննարկվող հարցի պարզաբանման տեսակետից հատկապես արժեքավոր են կոնդակի տվյալները «հայրենական մուլքի» տնօրինման մասին։

Հայտնի է, որ գյուղական համայնքներում, պարբերաբար վերաբաժանումների ենթակա համայնքապատկան հողերի (բաժնեհողեր) կողքին, կային նաև առանձին հողակտորներ, որոնք մշտապես թողնվում էին միևնույն տիրոջ օգտագործմանը։ Դրանք, անշուշտ, հողաբաժանումների ժամանակ չափվում և հաշվվում էին իրենց տերերի վրա, բայց իբրև «հայրենական», «ժառանգական մուլք» մնում էին անբաժան։

«Ժառանգական մուլքերի» գոյացման ուղիները համգամանորեն ուսումնասիրված են 19-րդ դարի հայկական գյուղական համայնքին լավատեղյակ Ս. Ողիազարովի կողմից։ Նա նշում է, որ սովորութային իրավունքով գյուղացիների «ժառանգական մուլք» («հայրենիք») էին ճանաչվում ու նրանց լիակատար տնօրինմանն էին ենթակա ոչ միայն անհատական միջոցներով, տևա-

10 Հայկական ՍՍՌ Պետական կենտրոնական պատմական արխիվ. ֆոնդ 57, գործ 27, թ. 19։

կան աշխատանքով ու քրտինքով կարգի բերված ու մշակելի դարձած անմշակ տարածությունները (խամահատեր, քարքարոտ տեղեր, մացառուտներ և այլն), այլև, երբեմն, համայնքապատկան այն հողաբաժինները, որոնք երկար ժամանակ մնում էին միևնույն ընտանիքի օգտագործման տակ, ցանկապատվում էին (հատկապես գյուղամերձ տարածություններում), վեր էին ածվում այգետեղերի, տնամերձերի[11]։ Այստեղ հարկ է նշել, որ համայնքի քայքայմանը նպաստող ցանկապատումները համեմատաբար մեծ չափերի էին հասնում վանքապատկան գյուղերն ընդգրկող այն շրջաններում, «ուր առավելապես զբաղվում էին այգեգործությամբ ու տեխնիկական կուլտուրաների մշակությամբ»[12]։

Այնուհետև, բանավեճ մղելով գյուղացիությունն տնտեսական կացությունն ուսումնասիրողներից մի քանիսի (Երիցով, Զելինսկի, Աբելով, Վերմիշև) դեմ,— որոնց կարծիքով այգիները, տնամերձերը և ընդհանրապես ցանկապատված տարածությունները, չնայած գտնվում էին առանձին ընտանիքների ժառանգական տիրապետության տակ, բայց չէին ճանաչվում որպես տիրողների սեփականություն,—Ս. Եղիազարովը գրում է. «Որ համայնքը գոյություն է ունեցել և գոյություն ունի ոչ միայն մի ժամանակ հին Հայաստանի կազմի մեջ մտած Անդրկովկասի շրջաններում, այլև ամբողջ Պարսկաստանում և փոքր Ասիայում,—դա փաստ է, բայց մյուս կողմից, հողային մասնավոր սեփականության միաժամանակյա գոյությունը նույնպես կասկածի ենթակա չէ»[13]։

Այսպիսով, ըստ Ս. Եղիազարովի, «ժառանգական մուլքի» էությունը հանգում է հողի մասնավոր սեփականատիրության։ Ապա՝ իր տեսակետը հիմնավորելու համար, անցնելով «ժառանգական մուլքի» տնօրինման հարցին, նա գրում է. «Ընտանիքի իրավունքը մուլքերի այդ տեսակների վրա, դադարում է միայն նրա մահացմամբ։ Մուլքերը, շնորհիվ իրենց բացառիկ դրության, կարող են լինել ամեն մի հատուցվող և անհատույց գործարքի՝ առուծախի, գրավդրման, նվիրատվության, կտակի և այլնի առարկա։ Դրանով է բացատրվում այն երևույթը, որ հնում այգիները և ցանկապատված տարածությունները ազատ օտարվում էին...»[14]։

Հին շրջանից իր դրույթներն ապացուցող առանձին փաստեր Ս. Եղիազարովը չի հիշատակում, այլ վկայակոչում է «Ջամբռ»-ը ամբողջությամբ։

Ի՞նչ կարելի է ասել Ս. Եղիազարովի եզրակացությունների մասին, նկատի ունենալով 18-րդ դարի և 19-րդ դարի սկզբի վանքապատկան գյուղերի պատմական իրականությունը։

Անառարկելի է, որ «ժառանգական մուլքերի» («հայրենիք») գոյացման հիմնական նախապայմանը գյուղացու անհատական միջոցներով տվյալ հողակտորի վրա գործադրված աշխատանքն էր, որը զուգորդվելով մյուս կարևոր պայմանի՝ անընդմեջ տիրապետման վաղեմության հետ, հիմք էր ստեղծում «մուլքը» ժառանգելու համար։ Ճիշտ է նաև այն, որ «ժառանգական մուլքերը» կարող էին դառնալ հատուցվող և անհատույց գործարքների առարկա։ Այդ

---

[11] С. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказье, ч. I. Сельская община, Казань, 1889, стр. 141—149 и др.

[12] Ц. П. Агаян, Некоторые вопросы землепользования в феодальной Армении. Տե՛ս «Вопросы истории сельского хозяйства и революционного движения в России», М., 1961, стр. 55.

[13] Ս. Եղիազարով, նշվ. աշխ., էջ 150։

[14] Նույն տեղում, էջ 148։

մասին, իսկապես, «Ջամբռ»-ում կան բազմաթիվ հիշատակություններ, որոնցից մի քանիսը մեջ բերվեցին վերը։

Սակայն «Ջամբռ»-ից անմիջականորեն չի երևում, թե ի՞նչն էր անցնում ժառանգաբար և ի՞նչը կարող էր գործարքի առարկա դառնալ՝ հողը, որպես մասնավոր սեփականություն, թե՞ սոսկ հողօգտագործման իրավունքը։

Այս տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում Եփրեմ կաթողիկոսի 1820 թ. կոնդակը։ Ի տարբերություն մինչև այժմ հայտնի վավերագրերի, այդ կոնդակում հողօգտագործման իրավունքը որոշակիորեն տարբերանշվում է հողի սեփականատիրման իրավունքից և ուղղակի նշվում, որ ժառանգաբար անցնում է ոչ թե հողը, այլ նրանից եկամուտ ստանալու իրավունքը. «... Միայն վեկամուտ արդիւնս շինուածոցն իւրեանց վայելօղք լինիցին (գյուղացիները—Ս. Ա..) յազգէ յազգ և յորդւոց յորդիս»։ Այդ նշանակում է, որ որպես «հայրենական մուլք» կարող էին վաճառվել, բաշխվել և հորից որդուն անցնել ոչ թե այգեստեղերը կամ շինությունների հատակը, այլ միայն այգին, ջրաղացը, տունը, մի խոսքով՝ հողից եկամուտ ստանալու, այն օգտագործելու իրավունքը։ Այս դեպքում, գյուղացիների կողմից հենց իրեն՝ Էջմիածնի վանքին հողային գույք վաճառելու կամ նվիրելու մասին «Ջամբռ»-ում արձանագրված բազմաթիվ գործարքները ևս պետք է դիտել որպես հողօգտագործման իրավունքի (և ոչ թե հողի) վաճառք կամ նվիրաբերում։ Այսինքն, պետք է ընդունել, որ այդ գործարքներում գյուղացիները վանքից ստանում էին ոչ թե «հողի գինը» (հողն, առանց այդ էլ, վանքը իր սեփականությունն էր համարում), այլ միայն հողի վրա նրանց թափած «ծախուց գինը»։ Ուշագրավ է, որ կոնդակի հեղինակները զգուշացնում էին գյուղացիներին, թե հողը առհասարակ չպետք է համարել «հայրենական մուլք»։ «Ժառանգական (հայրենական) մուլքի» էությունը նրանք հանգեցնում էին հողից եկամուտ ստանալու իրավունքի ժառանգական անցմանը մեկից մյուսին՝ միաժամանակ շեշտելով, որ հողը մուլքաղար-վանքին է պատկանում։

Սակայն այս բոլորից բնավ չի հետևում, թե գյուղական համայնքներում մասնավոր սեփականատիրական հողերի գոյության մասին Ս. Եղիազարովի պնդումը չի համապատասխանում իրականությանը։ Եթե գյուղական համայնքներում բաժնեհողերը ենթակա էին պարբերական վերաբաժանումների, ապա «ցանկապատված» հողերը, տնամերձներն ու այգիները հնթակա չէին բաժանման և ժառանգաբար մնում էին նույն տիրոջ օգտագործման տակ։ Անիմաստ կլիներ սկզբունքային համարել այն հարցը, թե «ժառանգական մուլքից» գյուղացիներն ինչպիսի իրավունքով էին օգտվում՝ մշտական օգտագործման, թե՞ սեփականատրման։ Երբ խոսքը «ժառանգական մուլքերի» մասին է, ապա հնարավոր չէ պատկերացնել նաև հողօգտագործման իրավունքի օտարում առանց հողի օտարման։ Առուծախի և նվիրաբերման գործարքներով հողօգտագործման իրավունքի հետ միասին ինքնաբերաբար մեկից մյուսին էր անցնում նաև հողը։ Առուծախի գործարքից հետո, գնողը ձեռք էր բերում հողի մշտական և անբաժան օգտագործման, այն որպես ժառանգություն թողնելու և, որպես սեփականություն ուզած եղանակով տնօրինելու իրավունք։

Այլ հարց է, թե գյուղացին գործնականում իր այդ իրավունքից օգտվելու ինչպիսի հնարավորություններ ուներ։ Վերը բերված փաստերը արդեն ցույց տվեցին, որ գյուղացիների իրավունքների սահմանափակումը հողի տնօրինման խնդրում անառարկելի փաստ էր։ Այս նկատառումով կարելի է մասամբ

միայն համաձայնվել Ս. Եղիազարովի այն մտքի հետ, թե «հնում այգիները և ցանկապատված տարածություններն ազատ օտարվում էին»։ «Մասամբ» ենք ասում, տվյալ դեպքում հաշվի առնելով այն իրողությունը, որ վանքապատկան գյուղացիները ազատորեն կարող էին հող վաճառել կամ նվիրել իրենց մուլքադարին և, մեկ էլ, մուլքադարի թույլտվությամբ՝ համագյուղացիներին։ Իսկ գյուղից դուրս հողի անհատական օտարման հնարավորությունները բացառված էին՝ էջմիածնի վանքի անմիջական հարկադրանքի պատճառով։

Բայց մի՞թե կոնդակի հեղինակները զուր տեղն էին շեշտում, որ ժառանգաբար անցնում է ոչ թե հողը, այլ նրանից եկամուտ ստանալու իրավունքը։ Անիմաստ էր արդյո՞ք նրանց այն հիշեցումը, թե հայրենական ջրաղացի, այգու և այլ «շինվածքի» նկատմամբ գյուղացու իրավունքը սահմանափակվում էր միայն «յորդւոց յորդի» եկամուտ ստանալով, իսկ հողը պատկանում է վանքին։

Թվում է, որ հոգևոր պետերի կողմից հողօգտագործման իրավունքի այդպիսի անջատումը նրա բնական հիմքից՝ հողից, ձևական բնույթ էր կրում, բայց հետապնդում էր գործնական նպատակ։ Այստեղ ցցուն կերպով դրսևորվել է մուլքատու գյուղերի բոլոր տեսակի հողերը սեփականացնելու, գյուղացուն հողին ամրացնելու, նրա կախումը լիակատար դարձնելու մուլքադարի ձգտումը։ Ի դեպ, էջմիածնի գահակալների այդպիսի ձգտման մասին է վկայում նաև «Ջամբռ»-ը։ Մեկ առ մեկ թվարկելով Վաղարշապատ գյուղում էջմիածնի վանքի սեփական «անդք և հողք», Սիմյոն Երևանցին գրում է. «Արդ այսօքիկ տեղիքս, որք գրեցան ի վերդ են յատուկ սրբոյ Աթոռոյս, յորս ոչ կարեն գեօղականքն մեր սերմանել ինչ առանց հրամանի մերոյ. բայց ի յայլ արտորայս գեղջս մերոյ՝ որք են գեօղականացն, մեք կարեմք սերմանել ըստ պահանջման ժամանակին եթե կամիցիմք»[15]։

Թե ինչպես էր կենսագործվում մուլքատու հողերը սեփականացնելու այդ ձգտումը, երևում է «Ջամբռ»-ի հետևյալ վկայությունից։ Ցանկանալով բարեկարգել էջմիածնի վանքի շրջակայքը և ընդարձակել պարիսպից ներս ընկած տարածությունը, կաթողիկոս Սիմյոն Երևանցին քանդում է վանքի պարիսպներին մոտ գտնվող վաղարշապատցիների տները և դրանց փոխարեն, պարիսպներից հեռու, պատրաստում է նոր տներ էջմիածնի ծախսերով[16]։

Վերջապես, ուշագրավ է նաև այն փաստը, որ 1820 թ. օշականցի Սանդրոսյանները իրենց իսկ գյուղում ջրաղաց պատրաստելու թույլտվություն էին խնդրում էջմիածնի գահակալներից, և սրանք էին որոշում ջրաղացատեղի սահմանները։ Դեռ ավելին. ջրաղացն աշխատեցնող ջրի հոսանքի ուղղությունը նույնիսկ մուլքադար-վանքն էր որոշում։

«Ջամբռ»-ում արձանագրված են նաև դեպքեր, երբ առանձին գյուղացիների վախճանվելուց հետո, նրանց անշարժ գույքը, օրինական ժառանգորդներ չունենալու պատճառով, անցել է մուլքադարին։ Այսպես, աշտարակցի ոմն Գրիգորի ու նրա կնոջ մահից հետո, նրանց այգիները մնում են անտեր, «վասն որոյ սուրբ Աթոռս զաւթէ զերիս կտոր այդիսն»[17]։

Վերը շարադրվածից կարելի է հանգել հետևյալ եզրակացությանը։

Վասքապատկան գյուղացիները ոչ միայն իրենց ժամանակավոր օգտա-

15 «Ջամբռ», էջ 158։

16 Նույն տեղում, էջ 203։

17 Նույն տեղում, էջ 177։

գործմանը տրամադրված բաժնեհողերի, այլև իրենց «ժառանգական մուլքը» համարվող հողերի տնօրինման խնդրում անմիջական կախման մեջ էին գտնվում մուլքադարից։ Տվյալ գյուղի սահմաններում հողը որևէ ձեռնարկման օբյեկտ կամ անհատական գործարքի առարկա դարձնելը հնարավոր էր միայն մուլքադարի գիտությամբ ու թույլտվությամբ։ Մուլքադարն առհասարակ չէր թույլատրում հողային գույքի անհատական օտարումներ վանքապատկան գյուղերի սահմաններից դուրս։

Էջմիածնի վանքը մուլքադարական գյուղերի հողային գույքի օտարումները կանխելու մի քանի շարժառիթներ ուներ։ Ամենից առաջ, նրա համար բոլորովին էլ միևնույնը չէր, թե ով է հարկ վճարողը՝ իր մուլքադարական գյուղի բնակիչը, թե, ասենք, հարևան գյուղացին, որի հետ ինքը մինչ այդ ոչ մի առնչություն չէր ունեցել։ Կասկածից վեր է, որ, ընդհանրապես, հարկատուների կազմում կատարվող փոփոխությունները դժվարություններ կառաջացնեին հարկահավաքման գործում։ Մյուս կողմից՝ այդ փոփոխությունները կարող էին առժամապես զրկել մուլքադարին, կամայականությամբ և արդեն փորձված այլ միջոցներով, գյուղացուց ավելին պոկելու հնարավորություններից։

Սակայն հարկատու գյուղերում հողային գույքի անհատական օտարումները կանխելու համար Էջմիածնի վանքն ուներ մեկ այլ, ավելի լուրջ, շարժառիթ։ Դա գյուղացուն ամենատարրական իրավունքներից ու տեղափոխման հնարավորություններից զրկելու, նրան հողին ամրացնելու և փաստորեն ճորտացնելու, մուլքադարի տնտեսությունը էժան բանվորական ուժով մշտապես ապահովելու ձգտումն էր։

Հայտնի է, որ Արևելքի պարսկական խանություններում, այդ թվում նաև Երևանի խանությունում, հողատեր-մուլքադարները անմիջականորեն, իրենց սեփական միջոցներով, գյուղատնտեսական արտադրությամբ չէին զբաղվում։ Նրանք կամ բոլորովին չունեին սեփական արտադրամիջոցներով վարվող տնտեսություններ կամ էլ, եթե ունեին՝ ապա դրանք իրենց մեծությամբ չէին գերազանցում գյուղացիական քիչ թե շատ զորեղ տնտեսություններին[18]։ Աշխատուժի պահանջը այդ տնտեսություններում հիմնականում հնարավոր էր բավարարել մուլքատու գյուղացիների կոռային պարտավորություններով (աշխատավճար ռենտա)՝ տարվա մեջ, հարկատու յուրաքանչյուր միավորից սահմանված թվով մշակներ աշխատանքի հանելով։ Դրանից դուրս, մուլքադարները, վարձու բանվորական ձեռքի մշտական կոնտինգենտի ապահովությամբ մտահոգվելու զորեղ շարժառիթներ չունեին։

Այս տեսակետից միանգամայն այլ դրության մեջ էր Էջմիածնի վանքը։ Վանական-մուլքադարական տնտեսությունը միակ խոշոր, լատիֆունդիալ տնտեսությունն էր ամբողջ Արևելյան Հայաստանում։ Մուլքատու գյուղերից բացի, և հենց այդ գյուղերում, Էջմիածնի վանքն ուներ մեծ չափերի հասնող սեփական հողատարածություններ, այգիներ, արոտավայրեր ու խոտհարքներ, արդյունագործական ձեռնարկություններ՝ ջրաղացներ, դինգեր, ձիթհաններ, բալմաթիվ կրպակներ, լծկան ու մթերատու անասուններ։ Վանքի տնտեսական

---

[18] И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX вв., Ленинград, 1949, стр. 75. *Տե՛ս նաև Խ. Հ. Ավդալբեգյան, Հողային հարցը Արևելյան Հայաստանում (1801—1917 թթ.), Երևան, 1959, էջ 108—109։*

գործունեության մեջ քիչ տեղ չէին բռնում նաև օժանդակ շինությունների (հյուրատների, իջևանատների, գոմերի, ճանապարհների) կառուցման, վերանորոգման ու բարեկարգման աշխատանքները։

Աշխատուժի պահանջը այսպիսի խոշոր տնտեսությունում հնարավոր չէր բավարարել մուլքատու գյուղացիների կոռային պարտավորություններով։ Այդ պատճառով, վանքի թե գյուղատնտեսական և թե շինարարական աշխատանքներում լայն կիրառումն ուներ վարձու բանվորական ուժը։ 18-րդ դարի վերջի և 19-րդ դարի սկզբի Էջմիածնի վանքի հաշվեմատյանների գրանցումներից պարզվել է, որ վանական տնտեսության մեջ վարձու աշխատուժի օգտագործումը տարեկան անցնում էր քսան հազար բանվորական օրից[19]։

Ճիշտ է վարձու մշակների կոնտինգենտը մեծ մասամբ բաղկացած էր Երևանի խանության տարբեր վայրերից եկած գյուղացիներից, բայց նրանում քիչ թիվ չէին կազմում նաև Էջմիածնապատկան գյուղերի (Վաղարշապատի, Օշականի, Եղվարդի, Մաստարայի և այլն) բնակիչները[20]։ Ընդ որում, ազատ վարձու բանուժի առկայությունը վանքապատկան գյուղերում, անհրաժեշտ էր Էջմիածնի վանքին ոչ միայն գյուղատնտեսական եռուն աշխատանքների ամիսներին, այլև՝ տարին-բոլոր, ամեն մի հարկավոր դեպքում օգտագործելու համար։

Սեփական տնտեսության հարևանությամբ բանուժի մշտական առկայություն ապահովելու և ուզած ժամանակ իրեն ձեռնտու պայմաններով այն օգտագործելու նպատակով, Էջմիածնի վանքը տարբեր ճանապարհներով ջրկում էր գյուղացուն յուր տնտեսական միջոցները ազատորեն տնօրինելու հնարավորություններից։ Ամենահիմնականը տվյալ դեպքում հողի տնօրինման մեջ գյուղացու իրավունքների սահմանափակումն ու նրան տեղափոխման հնարավորությունից զրկելն էր։

Բայց այստեղ մի շատ տեղին հարց կարող է առաջանալ։ Չէ՞ որ հողային ունեցվածքի օտարման միակ ուղին գյուղացիների անհատական գործարքները չէին, որոնք կարող էին կանխվել մուլքադարի հարկադրանքով. տարբեր ճանապարհներով, մուլքադարից անկախ հողային ունեցվածք կարող էր օտարել համայնքը, կամ կային նաև օտարումներ, որոնք իրավական տեսակետից (օրենսդրականորեն) անխուսափելի էին դառնում և որոնց կանխումը մուլքադարի ուժից վեր էր։

Վանքապատկան գյուղերին վերաբերող որոշ փաստեր խոսում են այն մասին, որ նման դեպքերում Էջմիածնի վանքը, հնարավորության սահմաններում, աշխատում էր սեփական միջոցներով ետ գնել արդեն օտարված ունեցվածքը։ «Ջամրո»-ում արձանագրված է երկու այդպիսի հետաքրքիր դեպք։

1. Վաղարշապատցի այգետեր Խան-Պապինի սերնդից մի աղջիկ ամուսնանում է երևանարնակ մի տաճիկի հետ։ Սրանց թոռներից մեկը, Սեյիդ անունով, հետագայում պահանջում է Խան-Պապինի մյուս հետնորդներից պապենական այդին հանձնել իրեն։ Դատարանի որոշմամբ այգին հանձնվում է Սեյիդին։ Ուրեմն, տեղի է ունենում մուլքադարական գյուղացու հողային ունեցված-

19 Բ. Մ. Հարությունյան, Վարձու աշխատանքը Երևանի խանության մեջ (Պատմաբանասիրական հանդես, 1959 թ., 1, էջ 85)։

20 ՀՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր հին ձեռագրերի ինստիտուտ (Մատենադարան), Կաթողիկոսական դիվան, թղթապ. 3, վավ. 8, էջ 77, 81 են, թղթապ. 20, վավ. 211ր, էջ 9—11, թղթապ. 2, վավ. 4։

քի օտարում՝ անկախ նրա կամքից՝ ժառանգության իրավունքի հիման վրա։ Բայց շուտով կաթողիկոս Սիմյոն Երևանցուն հաջողվում է այգին գնել Սեյիդից։ Այդ մասին նա գրում է. «Ապա և մեք չկամենալով զի ոտք տաճկի մի մտցե ի գեօղս մեր, առաք զայս այգիս ի յայս Սեյիդ կոչեցեալ տաճկէս՝ քառասուն թումանի՝ տաճկերէն և հաստատուն գրաւայով»[21]։

2. 1714 թ. կարկտահարումից տուժած վանքապատկան Օշական գյուղի բնակիչները իրենց կարիքներն հոգալու համար, պարտքով փոլ են վերցնում սհաթլվեցի Միրզա-Մահմուդից ու Հաջի Մուրադից և երևանցի Խոջա Փանոսի որդի Խոջա Մովսեսից՝ դրամ գնելով 28 այգի և 17 ջրաղաց։ Չկարողանալով ժամանակին պարտքը վերադարձնել, օշականցիները բոլոր այգիներն ու ջրաղացները թողնում են պարտատերերին։ Այս գործարքը կանխել մուլքադարը չէր կարող։ Հետո՝ միայն, էջմիածնի վանքը հիշյալ փողատերերից գնում է օտարված այգիներն ու ջրաղացները։ Ուշադրության արժանի են այս երկրորդ գործարքին վերաբերող Սիմյոն Երևանցու հետևյալ տողերը. «Ապա իբրև տեսանէ Աստվածատուր կաթողիկոսն զխեղճութիւն գեղջս այսօրիկ (որ մուլք է սրբոյ Աթոռոյս), զորոյ զայսքան այգիս և զջրաղացս այլք առեալ տիրեն, ոչ հանդուրժէ»[22]։

Արդ, ինչո՞վ բացատրել, որ մուլքադարը չէր կամենում կամ չէր հանդուրժում հողային ունեցվածքի օտարումները հարկատու գյուղերից։ Չէ՞ որ հողօգտագործման իրավունքը միաժամանակ պարտավորեցնում էր վերոհիշյալ այգիներից ու ջրաղացներից ստացվող եկամուտների մի մասը, որպես հարկ-ռենտա, վճարել մուլքադար-վանքին։ Ուշագրավ է, որ Աստվածատուր կաթողիկոսը Միրզա-Մահմուդից ու Հաջի Մուրադից օտարված գույքը ետ է գնում անհամեմատ պակաս գներով, որովհետև այգիների ու ջրաղացների մի քանի տարվա արդյունքներից նրանք հարկ չէին վճարել վանքին՝ «...Զգինս սոցա վասն այսորիկ պակաս տայ Աստուածատուր Կաթողիկոսն, զի յայնքան յամս կերեալք էին նոքա զայնքան մուլքսն»[23]։ Ուրեմն, անկախ այն բանից, թե ով էր օգտագործում հողը, տվյալ մուլքադարական գյուղի ամբողջ մուլքը պետք է հանձնվեր վանքին։ Այսուամենայնիվ հողային գույքի օտարումները ձեռնըտու չէին նրան։

Սիմյոն կաթողիկոսը, վաղարշապատցի Խան-Պապինի այգին երևանաբնակ Սեյիդից գնելու առիթով նշում է, որ էջմիածնի դահակալներին անցանկալի էր «զի ոտք տաճիկի մի մտցէ ի գեօղս մեր»։ Բայց միամտություն կլիներ կարծել, թե մուլքադար-վանքին սարսափեցնողը միայն Սեյիդի կամ Հաջի Մուրադի տաճկական ծագումն էր, քանի որ նա նույնպիսի անհանդուրժողականությամբ էր վերաբերվում նաև օշականցիների այգիների անցմանը հայկական ծագում ունեցող, երևանցի Խոջա Մովսեսին։

Ուրեմն ինչո՞ւմն էր բանը։ Բանը նրանումն էր, որ էջմիածնի դահակալները, շահավետության տեսակետից, գերադասում էին հիշյալ այգիներն ու ջրաղացները դարձնել վանքի անմիջական շահագործման օբյեկտներ, կամ տալ կապալով իրենց մուլքադարական գյուղացիներին, կամ էլ վերավաճառել նախկին տերերին, քան՝ թողնել ուրիշ մարդկանց ձեռքում։ Եվ իրոք, այդ այգինե-

21 «Ջամրոս», էջ 168 (ընդգծումը մերն է — Ս. Ա.)։
22 «Ջամրոս», էջ 174 (ընդգծումը մերն է — Ս. Ա.)։
23 «Ջամրոս», էջ 175։

րից մեկը Աստվածատուր կաթողիկոսը ծախում է վաղարշապատցի Մկրտումին[24], մյուսը՝ նույն գնով (ինչ գնով տր առել էր Հաջի Մուրադից) վերավաճառում նրա նախկին տիրոջը՝ օշականցի Մխիթարի որդի Խաչատուրին[25]։

Անտարակույս, «Ջամրռ»-ում արձանագրված երկու դեպքումն էլ, մուլքադարական գյուղերի հողային գույքի օտարումներն արգելելու հիմնական շարժառիթը այդ գյուղերից սպասվող բոլոր տեսակի եկամուտների անխափան ստացման ապահովումն էր։ Թերևս, հենց այդ իմաստով էլ Էջմիածնի վանքին ձեռնտու չէր մուլքատու գյուղերի տնտեսական ընդհանուր «խեղճությունը», որի մասին ակնարկում է Սիմյոն Երևանցին։

Էջմիածնի վանքի և վանքապատկան գյուղացիների փոխհարաբերությունը վերաբերող փաստերը հիմք են տալիս որոշ վերապահությամբ մոտենալու սովետական հետազոտողների աշխատություններում երբեմն կրկնվող այն մտքին, թե մուլքադարական գյուղերում հողային ունեցվածքի տնօրինման իրավունքը պատկանում էր համայնքին ու նրա անդամներին, իսկ մուլքադարը իրավունք չուներ խառնվելու նրանց ներքին գործերին[26]։ Այստեղ որոշակիորեն չեն տարբերանշված մի կողմից մուլքադարի և առանձին գյուղացու, մյուս կողմից մուլքադարի և համայնքի, երրորդ կողմից՝ համայնքի ու նրա անդամների փոխհարաբերության շրջանակներն ու դրանց միջև եղած փոխադարձ կապը։ Իհարկե, այս հարցերի սպառիչ և համակողմանի լուսաբանման համար անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ բավականաչափ ուղղակի փաստեր և կատարել դրանց առանձին, մանրազնին վերլուծություն։ Բայց, մեզ հետաքրքրող հարցի սահմաններում, որոշ եզրակացությունների կարելի է հանգել նաև վերը բերված փաստերի հիման վրա։

Անշուշտ, այն հանգամանքը, որ համայնքը կարող էր ընդհանուրի կարիքների համար դրավ դնել նույնիսկ առանձին համայնիկների այգիները (հավանաբար՝ փոխհատուցման սկզբունքով), ցույց է տալիս, որ նա ինքնուրույն էր (իր անդամների նկատմամբ) և մուլքադարից անկախ՝ տվյալ գյուղի հողային գույքի տնօրինման մեջ։ Բայց փաստ է նաև, որ մուլքադարն անտարբեր չէր դեպի մուլքատու գյուղերի հողային ֆոնդում ու հարկատուների կազմում կատարվող փոփոխությունները։ Ինչպես տեսանք, Էջմիածնի վանքը չէր կամենում կամ չէր հանդուրժում նման փոփոխություններ, և եթե ոչ հարկադրանքի ուժով, ապա՝ օրինական ճանապարհով (ետգնման միջոցով) խուսափում էր դրանցից։

Այլ էր փոխհարաբերությունը մուլքադարի և համայնքի առանձին անդամների միջև։

Գյուղացուն հողին ամրացնելու, նրան տեղափոխման հնարավորություններից զրկելու ձգտումը մղում էր մուլքադարին ամենակոպիտ միջամտության գյուղացիների ներքին գործերին։ Եթե Էջմիածնի վանքի հարկադրանքով արգելվում էր նույնիսկ փաստաթղթերով վավերացված այգու օտարումը, եթե վանքապատկան գյուղացիները ջրաղաց պատրաստելու թույլտվությունը խնդրում էին մուլքադարից (և այդպիսին ստանալու համար անմեղ պիտակի տակ կաշառք էին հրամցնում նրան), եթե ջրաղացն աշխատեցնող ջրի հոսանքի

24 «Ջամրռ», էջ 175։

25 «Կալվածագրեր» (կազմեց՝ Հար. Աբրահամյան), Երևան, 1941, էջ 79։

26 Բ. Մ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 34։ Տես նաև Վ. Ռշտունի, Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության (1828—1917 թթ.), մասն Ա., Երևան, 1960, էջ 23։

ուղղությունը և ջրաղացատեղի սահմանները մուլքադարն էր որոշում և, եթե տվյալ մուլքադարական գյուղի սահմաններում համագյուղացիների միջև կատարվող հողային գույքի առքուվաճառքը նույնիսկ պետք է համաձայնեցվեր մուլքադար վանքի հետ, ապա էլ ի՞նչ խոսք կարող է լինել գյուղացիների ներքին գործերին մուլքադարի չխառնվելու մասին։

Այստեղ մենք գործ ունենք երկու կարևոր հանգամանքի հետ։ Նախ, վանքը ձգտում էր «փակ շրջագծում» պահել մուլքադարական գյուղական համայնքները շահագործվող համայնիկների հաստատուն կազմով։ Իհարկե, Էջմիածնի գահակալներին ձեռնտու էր հարկատուների թվի ավելացումը։ Բայց դա հնարավոր էր ոչ թե տվյալ գյուղի բնակչության պարզ թվական աճի դեպքում, այլ հարկատու նոր միավորների գոյացման և նոր հողաբաժինների յուրացման դեպքում[27]։ Չպետք է մոռանալ, որ հարկ—ռենտայի չափը որոշվում էր ոչ թե շնչերի թվով, այլ հարկատու միավորներով՝ ըստ նրանց զբաղեցրած հողաբաժինների և ստացած եկամուտների։ Հետևաբար, գյուղացիների հողային ունեցվածքի առուծախը, որի դեպքում մեկ հարկատուին փոխարինելու էր մյուսը, բացի հարկագանձման հետ կապված դժվարություններից, շահավետ ոչինչ չէր տալիս վանքին։ Նրա համար ձեռնտու էր հարկատուների մշտական հաստատուն կազմը։

Մյուս կողմից «փակ» համայնքի ներսում գյուղացուն իրենից լիակատար կախման մեջ պահելու նպատակով, վանքը աշխատում էր չեզոքացնել համայնքին այնպիսի կարևոր խնդրում, ինչպիսին հողային գույքի տնօրինումն էր տվյալ գյուղի սահմաններում։ Պատահական չէր, որ օշականցի Սանդրոսյանները ջրաղացատեղի համար դիմում էին ոչ թե համայնքին, այլ մուլքադար վանքին։

Այսպիսի պայմաններում, ինչ խոսք, գյուղացու ազատ տեղափոխման հնարավորությունը դառնում էր ձևական, իսկ ճորտական կախումը՝ փաստ։ Ճիշտ է, վանքապատկան գյուղացին օրենսդրությամբ ամրացված չէր հողին, ուստի նրա նկատմամբ ճորտային իրավունքի գոյության մասին խոսք լինել չի կարող։ Բայց առկա էր գյուղացուն հողին ամրացնելու և փաստորեն ճորտացնելու հիմնական միջոցներից մեկը՝ հարկադրանքով և հետևողականորեն, հողային գույքի տնօրինման մեջ գյուղացու իրավունքների խիստ սահմանափակումը։

Անդրադառնալով այն հարցին, թե օրենսդրությամբ անձնապես ազատ համարվող մուլքադարական գյուղացին ինչպես էր կարողանում օգտվել ազատ տեղափոխման իրավունքից, Բ. Մ. Հարությունյանը գրում է. «Սակայն գյուղատնտեսության ոլորտից դուրս աշխատանքի շուկայի և գյուղատնտեսությունից դուրս բանվորական ուժի գործադրման հնարավորությունների բացակայությունը կամ չափազանց նեղ շրջառումը ապրուստի միջոցներ հայթայթելու համար, գյուղացիությանը հարկադրում էր ամուր նստել հողի վրա, իսկ գյուղերի ավերման և պատերազմի հետևանքով տնտեսության խորտակման դեպքում՝ մտնել այս կամ այն հողատիրոջ լծի տակ։ Այս՝ մի կողմից։ Մյուս կողմից՝ խանների, բեկերի և մյուս զորեղների ուղղակի, անօրինական բռնությունը

27 Նոր հարկատուներ կարելի էր ձեռք բերել նաև այս կամ այն գյուղի նկատմամբ հարկագանձման պետական առանձնաշնորհումներ ստանալու ճանապարհով, որը տվյալ դեպքում մեզ չի հետաքրքրում։

գյուղացուն ստիպում էր աշխատել իբրև ճորտ, թեկուզ և օրենքով անձնական ճորտացում չէր սահմանված»[28]։

Այս եզրակացությունը ամբողջովին կիրառելի է վանքապատկան գյուղացիների նկատմամբ։ Նկատի ունենալով և այն իրողությունը (իսկ դա մեր կարծիքով ամենահիմնականն է), որ վանրապատկան գյուղացիները իրենց մուլքադարի ուղղակի հարկադրանքով զրկված էին հողային դույքն ազատորեն տնօրինելու հնարավորությունից, պետք է ասել, որ նրանք փաստորեն գտնվում էին ճորտային վիճակում, որը, սակայն, իրավական ձևակերպման չէր ենթարկված։

28 Բ. Մ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 20։